# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյանի. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ N 730-Ա**

<<27>> օգոստոսի 2024 թվական　　　　քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 675-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի, 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 15-ի N 675-Ա որոշման մեջ քաղաքացի Ելենա Վռամի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման արդյունքում առաջացած նոր գույքային միավոր հանդիսացող հողամասի հասցեն՝ տեխնիկական վրիպակի պատճառով նշվել է սխալ.

**Որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 15-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ Ելենա Վռամի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 08-003-0067-0022 կադաստրային ծածկագրով հողամասի և բնակելի տան բաժանման արդյունքում՝ առաջացող նոր գույքային միավորներին հասցեներ տրամադրելու մասին>> N 675-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման առաջին կետի ա- ենթակետում նշված՝ <<0,00480 հա հողամասին՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Յու. Գագարինի փողոց թիվ 9/3 հողամաս>> նախադասությունը փոխարինել՝ <<0,00480 հա հողամասին՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Յու. Գագարինի փողոց թիվ 9/1 հողամաս>> նախադասությունով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

« 27» օգոստոսի 2024 թվական
Քաղաք Մարալիկ